*Հայկ Սարգսյան*[1]

# ՄԵՂԱԴՐԱՆՔԻ ՓՈՓՈԽՄԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ ԵՎ ՍԱՀՄԱՆԱԶԱՏՈՒՄԸ ՀԱՐԱԿԻՑ ԻՆՍՏԻՏՈՒՏՆԵՐԻՑ

Քրեական դատավարության իրավունքի վիճահարույց հիմնախնդիրներից են դատական քննության ընթացքում մեղադրանքի փոփոխմանն առնչվող մի շարք հարցեր: Սույն հետազոտության շրջանակներում կանդրադառնանք մեղադրանքի փոփոխման տեսակներին և կփորձենք սահմանազատել մեղադրանքի փոփոխման ինստիտուտը հարակից ինստիտուտներից և կարգավորումներից:

Տեսության մեջ մեղադրանքի փոփոխման տեսակները դասակարգվում են մի շարք հատկանիշներով, ինչն ունի և՛ տեսական, և՛ գործնական նշանակություն:

Առաջին, մեղադրանքի փոփոխումը դասակարգվում է ըստ փոփոխված մեղադրանքի ծավալի ի համեմատ սկզբնական մեղադրանքի: Այս հատկանիշով առանձնացվում են մեղադրանքի ծավալի ընդլայնումը, մեղադրանքի ծավալի նվազեցումը և մեղադրանքի բովանդակության փոփոխությունը առանց ծավալի նվազեցման կամ ընդլայնման[2]:

Այսպես, մեղադրանքի ծավալի ընդլայնումը կատարվում է մեղադրանքի մեջ՝

1. հանցավոր գործունեության նոր դրվագներ ներառելով կամ մեղադրյալին վերագրվող փաստական հանգամանքների շրջանակում առանձին հանգամանքներով լրացնելով,

2. արարքը մի քանի հոդվածներով որակելով, եթե նախկինում այն որակված է եղել մի հոդվածով, կամ միևնույն հոդվածի սահմաններում այլ կետերով կամ մասերով լրացնելով:

Այս առումով անհրաժեշտ է նշել, որ ինչպես ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում, այնպես էլ Նախագծում մեղադրանքը

---

[1] ԵՊՀ քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի ասպիրանտ, գիտ. ղեկավար՝ ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Գ. Ս. Ղազինյան:

[2] **Ровнейко В. В.,** Изменение обвинения в суде первой инстанции по российскому уголовно-процессуальному законодательству: автореф. дис. ... к.ю.н. Ижевск, 1996, էջ 58, **Михайлов А. А.,** Изменение прокурором обвинения и отказ прокурора от обвинения в суде первой инстанции. Автореф. дисс. ... канд. юрид. наук. Томск, էջ 109-110:

փոխելու հասկացության հետ զուգահեռ օգտագործվում է «մեղադրանքը լրացնելու» տերմինը, որը փաստացի նշված մեղադրանքի փոփոխումն է՝ մեղադրանքի ծավալի ընդլայնման միջոցով: Այսինքն՝ մեղադրանքի լրացումը մեղադրանքի փոփոխման տեսակ է: Հետևաբար մեղադրանքը փոփոխելու հետ զուգահեռ «մեղադրանքը լրացնելու» տերմինի օրենսդրական նախատեսումը չունի որևէ նորմատիվային անհրաժեշտություն, և դրա առանձին նախատեսումը որևէ ինքնուրույն խնդիր չի լուծում: Հետևաբար առաջարկում ենք այն հանել Նախագծից:

Մեղադրանքի ծավալի նվազեցումը կատարվում է մեղադրանքից՝

1. հանցավոր գործունեության առանձին դրվագներ հանելով կամ մեղադրյալին վերագրվող արարքի կազմում փաստական հանգամանքների շրջանակից առանձին հանգամանքներ հանելով,

2. քրեական օրենսգրքի մեկ կամ մի քանի հոդվածներ հանելով, եթե նախկինում մեղադրյալին մեղսագրվող արարքը որակված է եղել մի քանի հոդվածներով, կամ քրեական օրենսգրքի տվյալ հոդվածի սահմաններում առանձին կետեր կամ մասեր հանելով:

Մեղադրանքի բովանդակության փոփոխությունը՝ առանց մեղադրանքի ծավալի ավելացման կամ նվազեցման,

1. քրեական օրենսգրքի մեկ հոդվածը, մասը կամ կետը մյուս հոդվածով, մասով կամ կետով փոխելն է,

2. հանցավոր գործունեության դրվագներն այլ դրվագներով փոխարինելն է:

Երկրորդ, մեղադրանքի փոփոխման հաջորդ դասակարգումը կատարվում է ըստ նրա, թե արդյոք այդ փոփոխության արդյունքում առաջանում են նոր քննչական կամ այլ դատավարական գործողությունների կատարման անհրաժեշտություն (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 309.1-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասեր), թե մեղադրանքի փոփոխումը հնարավոր է առանց նոր քննչական կամ այլ դատավարական գործողությունների կատարման (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 309-րդ հոդվածի 3-րդ մաս): Գործող քրեադատավարական օրենսգրքով նշված տարբերակումն ունի առանցքային նշանակություն, քանի որ հնարավորություն է տալիս պարզել, թե կոնկրետ դեպքում մեղադրանքի փոփոխման որ ռեժիմն է կիրառելի:

Երրորդ, ըստ ծանրության աստիճանի՝ փոփոխված մեղադրանքը դասակարգվում է ավելի խիստ մեղադրանքի և ավելի մեղմ մեղադրանքի:

Տեսական գրականության մեջ կարծիք է արտահայտվել, որ մեղադրանքը որակվում է խստացման առումով փոփոխված, եթե ի համեմատ սկզբնական մեղադրանքի այն նախատեսում է ավելի ծանր պատժի նշանակման հնարավորություն կամ հանգեցնում է ավելի ծանր քրեաիրավական կամ քրեադատավարական հետևանքների[3]: Պրոֆեսոր Ֆ. Ֆատկուլլինի կարծիքով՝ մեղադրանքը պետք է համարվի խստացման առումով փոփոխված, երբ լրացվում է նոր փաստական և իրավական հանգամանքներով կամ երբ արարքի իրավաբանական որակման արդյունքում անձի վիճակը վատթարանում է այլ, պատժի խստության հետ չկապված պատճառներով[4]:

Այսինքն մեղադրանքը փոփոխվում է խստացման առումով, եթե մեղադրանքի փոփոխման արդյունքում կիրառվում է քրեական օրենսգրքի այլ հոդված կամ հոդվածի մաս կամ կետ, որի սանկցիան նախատեսում է ավելի խիստ պատիժ[5] կամ ավելի բարձր պատժաչափ, սկզբնական մեղադրանքի հետ համեմատ նախատեսում է լրացուցիչ պատիժ, կամ որպես այլընտրանք չի նախատեսում պատժի ավելի մեղմ տեսակներ, կամ երբ ներառվում է արարքը որակյալ դարձնող ծանրացնող հանգամանք, կամ մեծացվում է հանցագործությամբ պատճառված վնասը[6]: Մեղադրանքը կարող է համարվել խստացման առումով փոփոխված, եթե փոխվում է հանցակցության ձևը, օրինակ՝ անձը, ով մեղադրվում էր սպանության կատարմանը օժանդակելու մեջ, մեղադրանքի փոփոխման արդյունքում մեղադրվում է սպանությունը կազմակերպելու մեջ կամ համակցության ձևը փոխվում է ավելի բարդ ձևի, եթե վերջինս հանցակազմի հատկանիշների տեսանկյունից ունի քրեաիրավական նշանակություն[7]:

---

[3] **Михайлов А. А.,** Изменение прокурором обвинения и отказ прокурора от обвинения в суде первой инстанции. Автореф. дисс. ... канд. юрид. наук. Томск, С. 99.

[4] См.: **Фактуллин Ф. Н.,** Изменение обвинения. М., 1971. С. 47

[5] О том, какое наказание считать более строгим, см.: Блум М. И., Обратная сила закона. М.. 1969, էջ 112; **Бравилова Е. А.,** Пределы судебного разбирательства: дис... к. ю. н. Екатеринбург, 2004, էջ 141-148:

[6] Տե՛ս Постановление пленума Верховного суда Российской Федерации, 29.04.1996, N 1, 9 пункт, страница 5:

[7] **Михайлов А. А.,** Изменение прокурором обвинения и отказ прокурора от обвинения в суде первой инстанции. Автореф. дисс. ... канд. юрид. наук. Томск, էջ 95-96:

Մեղադրանքը փոփոխվում է խստացման առումով, երբ դրա արդյունքում մեղադրանքի իրավական գնահատականը չավարտված հանցագործությունից վերածվում է ավարտված հանցագործության, իսկ հանցագործության նախապատրաստությունը՝ հանցափորձի կամ մեղքի ձևը անզգուշությունից փոխվում է դիտավորության[8]: Մեղադրանքը որակվում է խստացման առումով փոփոխված նաև այն դեպքերում, երբ դրա մեջ ներառվում են անձին վերագրվող հանցավոր գործունեության նոր դրվագներ, կամ երբ մեղադրանքի փոփոխման արդյունքում հանցագործությունը որակվում է որպես վտանգավոր կամ առանձնապես վտանգավոր ռեցիդիվ[9]:

Անհրաժեշտ է համաձայնվել պրոֆեսոր Ֆատկուլլինի այն դիրքորոշման հետ, ըստ որի մեղադրանքը համարվում է խստացման առումով փոփոխված միայն այն ծանրացնող հանգամանքներով լրացվելու դեպքում, որոնք օրենսդրի կողմից օգտագործվում են որպես համապատասխան արարքը որակյալ դարձնող հանգամանքներ[10]: Նշված տեսակետին է նաև Վ. Ռովնեյկոն[11]: Հետևաբար, ընդունելի չէ գրականության մեջ տեղ գտած այն տեսակետը, ըստ որի ցանկացած դեպքում արարքը համարվում է խստացման առումով փոփոխված, եթե դրա մեջ ներառվում են ՀՀ քրեական օրենսգրքով 63-րդ հոդվածով նախատեսված ծանրացնող հանգամանքներ[12]: Ավելին, մեղադրանքը չպետք է համարվի խստացման առումով փոփոխված, եթե դրանից հանվում են առանձին մեղմացնող հանգամանքներ, որոնք թեկուզ և նախատեսված են ՀՀ քրեական օրենսգրքի 62-րդ հոդվածով, բայց չեն համարվում համապատասխան հանցագործության դիսպոզիցիայի հատկանիշներ[13]:

Մեղադրանքի փոփոխումը պետք է համարվի խստացման առումով նաև այն դեպքերում, երբ փոփոխման արդյունքում բացառվում է ամբաստանյալի նկատմամբ համաներման ակտի կիրառումը կամ

---

[8] **Михайлов А. А.,** там же, էջ 96:

[9] **Ровнейко В. В.,** Изменение обвинения в суде первой инстанции по российскому уголовно-процессуальному законодательству: автореф. дис. ... к.ю.н., Ижевск, 1996, էջ 62:

[10] **Фаткуллин Ф. Н.,** Обвинение и судебный приговор. Изд-во Казан, ун-та. 1965, էջ 209:

[11] **Ровнейко В. В.,** Изменение обвинения в суде первой инстанции по российскому уголовно-процессуальному законодательству: автореф. дис. ... к.ю.н. Ижевск, 1996, էջ 62-63:

[12] **Бравшова Е. А.,** Пределы судебного разбирательства: дне. ... к.ю.н. Екатеринбург, 2004, էջ 159:

[13] Տես նույն տեղը, С. 159-161.

ամբաստանյալի համար ստեղծվում են պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատման կամ ուղղիչ հիմնարկի տեսակը փոխելու ավելի բարդ պայմաններ:

Նշված դեպքերին հակառակ իրավիճակներում մեղադրանքը համարվում է մեղմացման առումով փոփոխված:

Սույն հիմքով մեղադրանքի փոփոխման դասակարգումը նույնպես ունի պրակտիկ նշանակություն: Այն թույլ է տալիս պարզել, թե ՀՀ գործող քրեական դատավարության օրենսգրքով արդյոք դատարանն իրավասու է սեփական նախաձեռնությամբ փոփոխել մեղադրանքը: Այն կարևոր նշանակություն ունի նաև վերաքննիչ դատարանում[14]:

Չորրորդ, մեղադրանքի փոփոխման հաջորդ դասակարգումը կատարվում է ըստ մեղադրանքի կառուցվածքի[15], այսինքն՝ փոփոխման արդյունքում մեղադրանքի կառուցվածքային ո՞ր տարրն է փոխվում՝ իրավակա՞ն կողմը, թե՞ փաստական:

Տ. Դոբրովոլսկայան որպես մեղադրանքի ձևակերպման մեջ փոփոխության տեսակներ սահմանում էր՝

1. հանցավոր գործունեության նոր դրվագներ ներառելը կամ հանելը,

2. մեղադրյալի պատասխանատվությունը մեղմացնող կամ ծանրացնող նոր փաստական հանգամանքներ նախատեսելը կամ նախկինները հանելը,

3. նոր փաստեր ներառելը, որոնք վկայում են նախկինի համեմատ հանցագործության կատարման այլ մեղքի ձևի, շարժառիթի կամ հանգամանքների, հանցագործության հետևանքների, հանցակցության ձևերի կամ հանցագործության փուլերի մասին,

4. նոր փաստեր նախատեսելը, որը վկայում է այլ հանցագործության օբյեկտի մասին:

Ըստ մեղադրյալին մեղսագրվող արարքի իրավաբանական որակման փոփոխությունը դրսևորվում է՝

1. քրեական օրենսգրքի մեկ հոդվածը մյուսով փոխարինելով,

---

[14] Նշված դասակարգումը հնարավորություն է տալիս պարզել, թե արդյոք վերաքննիչ դատարանը կարող է փոփոխել մեղադրանքի իրավական գնահատականը, եթե բողոքը չի բերել դատախազը, տուժողը կամ նրա ներկայացուցիչը:

[15] **Фаткуллин Ф. Н.,** Изменение обвинения. М., 1971, էջ 43-44:

2. քրեական օրենսգրքի միևնույն հոդվածի կետերը կամ մասերը փոխելով,

3. քրեական օրենսգրքի մեկ կամ մի քանի հոդվածները հանելով, եթե նախկինում մեղադրյալին մեղսագրվող արարքը որակված է եղել մի քանի հոդվածներով,

4. արարքը մի քանի հոդվածներով որակելով, եթե նախկինում որակված է եղել մեկ հոդվածով[16]:

Մեղադրանքի փոփոխման նշված դասակարգումն ամրագրվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի նախագծում[17]: Հետևաբար, նշված եղանակով դասակարգումն ունի առավել կարևոր նշանակություն, քանի որ ըստ դրա որոշվում է, թե մեղադրանքը փոփոխելու իրավազորությամբ օժտված սուբյեկտներից ով և ինչ սահմաններում է օժտված նման լիազորությամբ:

Համակարծիք լինելով մեղադրանքի իրավական կողմի փոփոխման վերաբերյալ Ն. Դոբրովոլսկայի առաջարկած տարբերակման հետ, կարծում ենք մեղադրանքի փաստական կողմի փոփոխությունը դրսևորվում է այն դեպքերում, երբ մեղադրանքում՝

1. ներառվում կամ հանվում են հանցավոր գործունեության նոր դրվագներ,

2. ներառվում են այնպիսի փաստական հանգամանքներ, որոնք հանցակազմի հատկանիշների տեսանկյունից ունեն քրեաիրավական նշանակություն:

Հինգերորդ, մեղադրանքի փոփոխումը բաժանվում է խմբերի՝ ըստ այդ դատավարական ակտը կայացնող սուբյեկտի[18]: Նշված հիմքով տարբերակվում են մեղադրանքի փոփոխումը, որը կատարվում է դատախազի և դատարանի կողմից: Նման դասակարգումը հնարավորություն է տալիս տարբերակել նշված սուբյեկտներից յուրաքանչյուրի կողմից քրեադատավարական օրենսգրքով սահմանված մեղադրանքի փոփոխման սահմանները և կարգը: Տեսության մեջ առաջարկվում է նշված հատկանիշով որպես մեղադրանք փոփոխող սուբյեկտ ճանաչել նաև պաշտպանության կողմին[19]:

---

[16] **Доброволская Т. Н.,** Изменение обвинения в судебных стадиях советского уголовного процесса. М., 1977. С. 29.

[17] Տե՛ս ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծի 283-րդ հոդված:

[18] **Фактуллин Ф. Н.,** Изменение обвинения. М., 1971, էջ 42:

[19] **Калинкин С.,** Состязательность в уголовном процессе и пределы судебного разбирательства// Уголовное право. 2006. Х°6, էջ 69-72:

Քանի որ դատաքննության ընթացքում մեղադրանքի փոփոխման ինստիտուտը որոշակի ընդհանրություններ և նմանություններ ունի դատավարական այլ ինստիտուտների հետ, ուստի կարծում ենք անհրաժեշտ է համադրել այդ ինստիտուտները՝ վերհանելով դրանց տարբերությունները: Նշենք, որ նշված հիմնախնդիրն ուսումնասիրվել է տարբեր հեղինակների կողմից[20]:

Նախ անհրաժեշտ է տարբերակել մեղադրանքի փոփոխումը և մեղադրանքը շտկելը: Մեղադրական եզրակացության մեջ արտացոլված յուրաքանչյուր հանգամանքի փոփոխություն փաստացի հանգեցնում է մեղադրանքի ծավալի փոփոխության՝ փոխելով տվյալ գործով դատական քննության սահմանները՝ դատական հետազոտման առարկան: Նման դեպքում հարց է առաջանում, թե արդյոք մեղադրական եզրակացության մեջ արտացոլված ցանկացած հանգամանքի (և իրավական, և փաստական) փոփոխություն պետք է կատարվի քրեադատավարական օրենսգրքով սահմանված մեղադրանքի փոփոխման կարգով, թե՞ նշված կարգը պետք է գործի սահմանափակ դեպքերում:

Քրեական դատավարության տեսության մեջ նշված հարցին միանշանակ պատասխան չի տրվում: Ընդհանուր առմամբ, և՛ խորհրդային, և՛ հետխորհրդային դատավարագիտության մեջ մեղադրական եզրակացությունում արտացոլված յուրաքանչյուր հանգամանքի փոփոխություն դիտվում էր որպես մեղադրանքի ծավալի փոփոխություն[21]: Նման մոտեցումը պայմանավորված էր այն հանգամանքով, որ մեղադրանքն իր արտացոլումն է գտնում որպես մեղադրյալ ներգրավելու որոշման, մեղադրական եզրակացության մեջ, իսկ հետագայում՝ նաև մեղադրական դատավճռում[22], հետևաբար նշված դատական ակտերում ցանկացած փոփոխություն, այդ թվում՝ տեխ-

---

[20] **Добровопская Т. Н.,** Изменение обвинения в судебных стадиях советского уголовного процесса. М., 1977, էջ 32-35; **Жогин Н. В., Фаткуллин Ф. Н.,** Предварительное следствие. М., 1965, էջ 238-241; **Фактуллин Ф. Н.,** Изменение обвинения. М., 1971, էջ 44-51; **Якимович Ю. К.,** О соотношении возбуждения уголовного дела, изменения и дополнения обвинения// Актуальные вопросы правоведения в современный период: Сб. статей/ Под ред. проф. В. Ф. Воловчна. Томск: Изд-во Том. ун-та. 1996, էջ 189-190:

[21] Ա. Ղամբարյան, Դատարանում մեղադրանքը փոխելը և մեղադրանքի հրաժարվելը: Եր. Իրավունք, 2009, էջ 19:

[22] **Бажанов М. И.,** Изменение обвинение в советском уголовном процессе. Автореф. Дисс. ... канд. юрид. наук. Харьковский юридический институт им. Л. М. Кагановича. Харьков, 1951, էջ 19:

նիկական սխալների ուղղում, պետք է գնահատվի որպես մեղադրանքի փոփոխություն:

Մեկ այլ մոտեցման համաձայն մեղադրանքի էական փոփոխություն է համարվում այն տարբերությունը, որը հանգեցնում է նախկինում մեղսագրվող հանցակազմի փոփոխությանը[23]: Ըստ Պ. Դավիդովի՝ մեղադրանքի փոփոխությունը հնարավոր է միմիայն արարքի քրեաիրավական որակման փոփոխման պարագայում: Փոխարենը հանցագործության իրավաբանական որակումը կարող է մնալ անփոփոխ, մինչդեռ մեղադրանքի ձևակերպումը կարող է էականորեն փոխվել[24]:

Պրոֆեսոր Դոբրովոլսկայան նշում է, որ մեղադրանքի փոփոխումը պետք է կիրառվի այն դեպքում, երբ տեղի է ունենում փաստական հանգամանքների էական փոփոխություն: Նշվածն առկա է այն դեպքերում, երբ ի հայտ են գալիս այնպիսի փաստական հանգամանքներ, որոնք վկայում են հանցագործության այլ օբյեկտի, կատարման այլ վայրի և ժամանակի մասին, եթե վերջիններս ունեն քրեաիրավական նշանակություն կամ վկայում են մեղադրյալի անձի առավել հանրային վտանգավորության մասին, սուբյեկտիվ կողմի այլ հատկանիշի կամ կատարման եղանակի, եթե վերջիններս դիսպոզիցիայի հատկանիշներ են, կամ հանցակցության ձևի մասին[25]:

Մեղադրանքի փոփոխումը պետք է համարվի էական այն դեպքերում, երբ ի հայտ են գալիս նախկինում անհայտ և քրեաիրավական նշանակություն ունեցող փաստական հանգամանքներ, որոնք ենթադրում են մեղադրյալին վերագրվող հանցագործության նոր իրավական ձևակերպում[26]:

Անկասկած, մեղադրանքի փոփոխման հատուկ ռեժիմը պետք է կիրառվի այն դեպքերում, երբ փոխվում են ինչպես մեղադրանքի փաստական, այնպես էլ իրավաբական կողմերը[27]: Մեղադրանքի փոփոխման ռեժիմը պետք է կիրառվի նաև այն դեպքում, երբ առանց

---

[23] **Давыдов П. М.,** Обвинение в советском уголовном процессе/ Свердловск, 1974, էջ136:

[24] **Доброволская Т. Н.,** Изменение обвинения в судебных стадиях советского уголовного процесса. М., 1977. С. 56.

[25] **Доброволская Т. Н.,** նույն տեղը, էջ 56-57:

[26] **Михайлов А. А.,** Изменение прокурором обвинения и отказ прокурора от обвинения в суде первой инстанции. Автореф. дисс. ... канд. юрид. наук. Томск, էջ 100:

[27] **Ղամբարյան Ա.,** Դատարանում մեղադրանքը փոխելը և մեղադրանքից հրաժարվելը: Եր. Իրավունք, 2009, էջ 19:

փաստական հանգամանքների փոփոխության փոխվում է արարքի իրավաբանական որակումը: Նշվածը հնարավոր է հետևյալ դեպքերում.

1. Սկզբնական մեղադրանքով մեղադրյալին վերագրվող արարքին (փաստական հանգամանքներին) տրվել է սխալ որակում՝ իրավական գնահատական: Մեղադրանքի փոփոխման արդյունքում մեղադրյալի արարքի նկատմամբ կիրառվում է ճիշտ քրեական իրավունքի նորմը:

2. ՀՀ քրեական օրենսգրքում կատարված փոփոխության արդյունքում առաջանում է մեղադրանքի իրավական կողմի փոփոխման անհրաժեշտություն: Օրինակ՝ անձը մեղադրվում էր խուլիգանական դրդումներով առողջությանը ծանր վնաս պատճառելու համար (ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 2-րդ մասի 9-րդ կետ): Նշված ծանրացնող հանգամանքը հանվում է քրեական օրենսգրքից, և արարքը որակվում է ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով:

3. ՀՀ Սահմանադրական դատարանի կողմից քրեական իրավունքի որևէ նորմ ՀՀ Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչվելու դեպքում, երբ անձի արարքը կարող է որակվել ՀՀ քրեական օրենսգրքի մեկ այլ նորմով:

Վիճելի է մնում այն հարցը, թե դատական քննության ընթացքում մեղադրանքի փաստական հանգամանքների փոփոխությունը, որը չի հանգեցնում արարքի իրավաբանական որակման փոփոխության, արդյոք պարտավորեցնում է մեղադրողին մեղադրանքը փոփոխելու որոշում կայացնել:

Օրինակ՝ դատախազի կողմից հաստատված մեղադրական եզրակացության մեջ նշվում էր, որ Ա-ն և Բ-ն երկաթե խողովակների միջոցով, ձեռքերի և ոտքերի հարվածներով Գ-ի առողջությանը դիտավորությամբ պատճառել են ծանր վնաս: Սակայն դատաքննության ընթացքում հաստատվում է, որ մեղադրյալներից միայն Բ-ն է հարվածել և երկաթե խողովակով և ձեռքերով ու ոտքերով, իսկ Ա-ն հարվածել է բացառապես խողովակներով: Արդյոք նման պարագայում պետք է կիրառվի մեղադրանքի փոփոխման ռեժիմը:

Կարծում ենք փաստական հանգամանքների փոփոխությունը հիմք է մեղադրանքի փոփոխության համար, երբ նման փոփոխության արդյունքում, թեկուզ և արարքի իրավաբանական որակումը

մնում է նույնը, սակայն փոխվում են հանցակազմի հատկանիշների բովանդակությունը: Դա հնարավոր է այն դեպքերում, երբ փաստական հանգամանքների փոփոխության հետևանքով փոխվում է՝

1) հանցագործության կատարման նպատակը կամ շարժառիթը, եթե վերջիններս քրեաիրավական համապատասխան նորմի դիսպոզիցիայի հատկանիշ են, օրինակ՝ անձը մեղադրվում է խմբային շահերից ելնելով պաշտոնեական դիրքը ծառայության շահերին հակառակ օգտագործելու և ծառայողական պարտականությունները չկատարելու համար, սակայն դատաքննության ընթացքում պարզվում է, որ նշված հանցագործությունն անձը կատարել է ոչ թե խմբային շահերից ելնելով, այլ ղեկավարվելով շահադիտական շարժառիթով,

2) միևնույն հանցակազմի դիսպոզիցիայում նկարագրված այլընտրանքային արարքը, օրինակ՝ անձը մեղադրվում է բռնություն գործադրելու ձևով կատարված բռնաբարության մեջ, սակայն դատաքննության ընթացքում հիմնավորվում է, որ նշված արարքը կատարվել է ոչ թե բռնություն գործադրելով, այլ գործադրելու սպառնալիքով,

3) միևնույն հանցակազմի հակաիրավական եղանակը, օրինակ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 132-րդ հոդվածը որպես մարդկանց հավաքագրելու հակաիրավական եղանակ թվարկում է խարդախությունը և խոցելի վիճակի օգտագործումը: Եթե մեղադրանք է առաջադրվել անձի խոցելի վիճակն օգտագործելու եղանակով հավաքագրելու համար, սակայն դատաքննության ընթացքում պարզվում է, որ արարքը կատարվել է ոչ թե խոցելի վիճակն օգտագործելու, այլ խարդախության եղանակով,

4) բլանկետային դիսպոզիցիայի բովանդակությունը կազմող օրենսդրական ակտերը, օրինակ՝ անձին մեղադրանք է առաջադրվել ճանապարհային երթևեկության կամ տրանսպորտային միջոցների շահագործման կանոնները խախտելու արդյունքում մարդուն անզգուշությամբ մահ պատճառելու համար՝ վկայակոչելով ճանապարհային երթևեկության համապատասխան կանոնը, որը խախտվել է: Սակայն փաստական հանգամանքների փոփոխության արդյունքում ճանապարհային երթևեկության համապատասխան կանոնը փոխվում է մեկ այլ կանոնով:

Ասվածից հետևում է, որ այն դեպքերում, երբ համապատասխան փաստական հանգամանքների փոփոխությունն առաջացնում է

քրեական նորմի դիսպոզիցիայի հատկանիշների փոփոխություն, այսինքն՝ այդ փոփոխությունն ունի քրեաիրավական նշանակություն, ապա այն պետք է մեղադրանքի փոփոխման հիմք համարել:

Հետևաբար Ա-ի և Բ-ի ենթադրյալ կատարած արարքի վերաբերյալ բերված օրինակը որևէ կերպ չի կարող մեղադրանքի փոփոխման հիմք հանդիսանալ, քանի փոփոխված փաստական հանգամանքները հանցակազմի հատկանիշների տեսանկյունից չունեն քրեաիրավական նշանակություն:

Այնուամենայնիվ հնարավոր է, որ փաստական հանգամանքները մեղադրանքի փոփոխման հիմք հանդիսանան նաև այն դեպքերում, երբ չի փոխվում ոչ արարքի իրավաբանական որակումը, ոչ էլ հանցակազմի հատկանիշների բովանդակությունը: Դա հնարավոր է այն դեպքերում, երբ առկա է մեղադրանքի փաստական հանգամանքների այնպիսի փոփոխություն, որը դրսևորվում է միևնույն իրավաբանական որակման շրջանակներում մեղադրանքի մեջ ընդգրկված հանցագործության դրվագներն ավելացնելով կամ առանձին դրվագներ հանելով:

Օրինակ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 132.1-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով առաջադրված մեղադրանքով (երկու անձանց սեռական շահագործման ենթարկել) անձը մեղադրվում է չորս անձանց սեռական շահագործման մեջ: Սակայն դատական քննության ընթացքում պարզվում է, որ նշված անձանց թիվը ոչ թե չորս է, այլ երեք կամ հինգ:

Նման դեպքում թեկուզ և ի հայտ եկած փաստական հանգամանքները հանցակազմի հատկանիշների փոփոխության չեն հանգեցնում, սակայն մեղադրողը պետք է կատարի փաստական հանգամանքներով մեղադրանքի փոփոխություն:

Սակայն մեղադրանքի փոփոխություն չի համարվում մեղադրանքի հիմքում դրված փաստական հանգամանքների այնպիսի փոփոխությունները, որոնք կապված չեն հանցակազմի (դիսպոզիցիայի) հատկանիշների փոփոխության կամ հանցագործության դրվագներ լրացնելու կամ հանելու հետ, օրինակ՝ մեղադրական եզրակացության մեջ մեղադրյալի ծննդյան տարին կամ հայրանունն ուղղելը, նրա պատասխանատվությունը մեղմացնող կամ ծանրացնող հանգամանքների փոփոխությունը, օրենքով նախատեսվածից ավելի մեղմ պատիժ նշանակելու հիմք հանդիսացող փաստական հանգամանքների ի հայտ գալը կամ այլ փաստական հանգամանքների ի հայտ

գալը, որոնք կարող են ազդել նշանակվելիք պատժի վրա:

Սակայն դա չի նշանակակում, որ մեղադրողը չպետք է որևէ կերպ արձագանքի դատաքննության ընթացքում մեղադրական եզրակացության մեջ նկարագրված փաստերի փոփոխությանը: Դրանց ի հայտ գալուն դատախազը պետք է արձագանքի հայտարարություն անելու ձևով[28]:

Օրինակ՝ եթե դատական քննության ընթացքում չի հիմնավորվում, որ ամբաստանյալը հանցագործությունը կատարել է ալկոհոլ օգտագործած վիճակում, ապա մեղադրական եզրակացության մեջ նշված պատասխանատվությունը ծանրացնող հանգամանքների շրջանակում տեղի է ունենում փոփոխություն, որին մեղադրողն արձագանքում է ոչ թե մեղադրանքը փոխելու մասին որոշում կայացնելով, այլ մեղադրանքը շտկելու վերաբերյալ հայտարարություն անելով:

Հետևաբար անհրաժեշտ է տարբերակել մեղադրանքը փոփոխելու ինստիտուտը մեղադրանքը շտկելուց: Առաջինը կատարվում է այն դեպքերում, երբ՝

1) փոխվում է արարքի իրավաբանական որակումը.

2) փոփոխված փաստական հանգամանքները հանգեցնում են հանցակազմի հատկանիշների փոփոխության.

3) լրացվում կամ հանվում են հանցագործության դրվագները:

Իսկ այն դեպքում, երբ փոփոխված փաստական հանգամանքները չեն առաջացնում հանցակազմի հատկանիշների փոփոխություն և կապված չեն հանցագործության դրվագներ լրացնելու կամ հանելու հետ, մեղադրողը շտկում է առաջադրված մեղադրանքը:

Մեղադրանքը փոփոխելու ինստիտուտն անհրաժեշտ է տարբերակել մեղադրանքից հրաժարվելու ինստիտուտից:

Քրեական դատավարության իրավունքի տեսության մեջ ավանդաբար դատախազի կողմից մեղադրանքի փոփոխման ինստիտուտը սերտորեն փոխկապակցվում է դատական քննության ընթացքում մեղադրանքից հրաժարվելու ինստիտուտի հետ[29]՝ ելնելով այն հանգամանքից, որ երկուսն էլ մեղադրանքի տնօրինման ձև են: Դրանով

---

[28] **Ղամբարյան Ա.,** Դատարանում մեղադրանքը փոխելը և մեղադրանքի հրաժարվելը: Եր. Իրավունք, 2009, էջ 21:

[29] **Գոլովկո Լեոնիդ,** Դատախազի կողմից մեղադրանքից հրաժարման և դատարանում մեղադրանքի փոփոխման ինստիտուտները: Հետխորհրդային զարգացումները տեսական մոլորումների պայմաններում, Պետություն և իրավունք N 2, էջ 53:

պայմանավորված գիտական աշխատություններում նշված ինստիտուտները հաճախ ուսումնասիրվում են միասին[30]:

Սակայն մեղադրանքից հրաժարվելու ինստիտուտի խնդիրները շատ ավելի խորն են և հայեցակարգային ու գտնվում են ոչ միայն իրավական, այլ նաև քաղաքական հարթությունում: Փոխարենը դատախազի կողմից մեղադրանքի փոփոխման ինստիտուտն ավելի փոխկապակցված է դատաքննության սահմանների հետ և չունի որևէ առնչություն քաղաքական հարթության հետ[31]:

Պատական չէ, որ դատական քննության ընթացքում մեղադրանքի փոփոխումը և դրանից հրաժարվելու հիմնախնդիրներն այն բացառիկ երկու հարցերն են, որոնց վերաբերյալ նախագծով, ի տարբերություն ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի հայեցակարգի (այսուհետ՝ Հայեցակարգ), սահմանվել է տարբերվող իրավակարգավորում:

Տեսության մեջ մեղադրանքից հրաժարվելը բնութագրվում է որպես քրեական դատավարության օրենսգրքով սահմանված հիմքերի առկայության դեպքում դատախազի կայացրած որոշում, որը վկայում է քրեական գործով մեղադրական գործունեության դադարեցման մասին[32]: Այն մեղադրողի քրեական գործի նյութերի հետազոտման արդյունքում ձևավորված դիրքորոշումն է հանցակազմի, հանցադեպի, հանցագործությանը ամբաստանյալի առնչության բացակայության մասին, որը դրսևորվում է դատաքննության ընթացքում քրեական հետապնդումը լրիվ կամ մասնակի դադարեցնելու մասին հայտարարության ձևով[33]: Մեղադրանքից հրաժարվելը մեղադրողի դիրքորոշումն է իր կողմից պաշտպանվող մեղադրանքի անհիմն լինելու վերաբերյալ:

Եվ մեղադրանքը փոխելու դեպքում, և մեղադրանքից հրաժարվելու դեպքում փոխվում է մեղադրական եզրակացությունը հաստատած դատախազի դիրքորոշումը պաշտպանվող մեղադրանքի հիմնավորվածության հանդեպ, որն արտահայտվում է պետահիշխանա-

---

[30] Օրինակ **Михайлов А. А.,** Изменение прокурором обвинения и отказ прокурора от обвинения в суде первой инстанции. Автореф. дисс. ... канд. юрид. наук. Томск:

[31] **Գոլովկո Լեոնիդ,** նշվ. աշխ., էջ 53:

[32] **Михайлов А. А.,** Изменение прокурором обвинения и отказ прокурора от обвинения в суде первой инстанции. Автореф. дисс. ... канд. юрид. наук. Томск, с. 221.

[33] **Кириллова Н. А.,** Отказ государственного обвинителя от обвинения: автореф. дис. ... канд. юрид. наук/ Н.А. Кириллова. - СПб., 2007. - 17 с.

կան ակտի կայացմամբ: Նշվածը կարող է ունենալ ինչպես օբյեկտիվ, այնպես էլ սուբյեկտիվ պատճառներ:

Սակայն եթե մեղադրանքը փոխելու դեպքում դատախազը գտնում է, որ մեղադրական եզրակացությամբ մեղադրյալին վերագրվող փաստական հանգամանքների կապակցությամբ առկա են այլ հանցագործության հատկանիշներ, ապա մեղադրանքից հրաժարվելու պարագայում դատախազի դիրքորոշումն այն է, որ հանցագործության հատկանիշներն ընդհանրապես բացակայում են:

Տեսության մեջ առկա է կարծիք, ըստ որի եթե անձն իրական համակցության պարագայում մեղադրվում է երկու և ավելի հանցագործություն կատարելու մեջ, և դատաքննության ընթացքում հաստատվում է դրանցից որևէ մեկով նրա անմեղության փաստը, ապա դատախազը պետք է կայացնի մեղադրանքը փոփոխելու մասին որոշում[34]: Նման մոտեցումը, կարծում ենք, սխալ է, և նշված դեպքում դատախազը պետք է կայացնի մեղադրանքից մասնակի հրաժարվելու մասին որոշում[35]:

Տեսության մեջ նշվում է, որ մեղադրյալին առաջադրված մեղադրանքի փոփոխությունը պետք է տարբերակել նրան նոր մեղադրանք առաջադրելուց[36]: Առկա է կարծիք, ըստ որի եթե դատական քննության ընթացքում հայտնի է դառնում մեղադրյալի կողմից այլ հանցագործության կատարման մասին, ապա պետք է կայացվի մեղադրանքը փոփոխելու մասին որոշում[37]:

Նման մոտեցումը, մեր կարծիքով, անընդունելի է: Եթե գործի քննության ընթացքում ի հայտ են գալիս հանգամանքներ, որոնք վկայում են մեղադրյալի կողմից այլ հանցագործության կատարման մասին, ապա առաջադրված մեղադրանքը փոփոխելու մասին որոշում պետք է կայացվի միայն այն դեպքում, երբ՝

1) նշված երկու հանցագործությունները կազմում են իդեալական համակցություն, և մեղադրյալի գործողությունը որակված չի եղել քրեական օրենսգրքի երկու կամ ավելի հոդվածներով, ինչը եղել է իրավական գնահատականի հետ կապված սխալի արդյունք,

---

[34] **Белозеров Ю. Н., Полукаров Т. Т.,** Практика по советскому уголовному процессу под ред. Л. Н. Гусева, вып. 2,, М, 1961, стр. 51.

[35] См.: **Фактуллин Ф. Н.,** Изменение обвинения. М., 1971. С. 50

[36] **Ровнейко В. В.,** Изменение обвинения в суде первой инстанции по российскому уголовно-процессуальному законодательству: автореф. дис. ... к.ю.н. Ижевск, 1996, с. 62.

[37] **Гальперин И. М.,** Направление уголовного дела на доследование, Госюриздат, 1960, с. 90.

2) միևնույն իրավաբանական որակման շրջանակներում մեղադրանքի մեջ ավելացվում են հանցագործության առանձին դրվագներ:

Մյուս բոլոր դեպքերում մեղադրանքը փոփոխելու մասին որոշում չի կարող կայացվել: Ասվածը հիմնավորվում է նաև նրանով, որ մեղադրանքի փոփոխման ինստիտուտն ուղղված է մեղադրանքում առկա փաստական և իրավական այն թերությունների շտկման, որն արտացոլված է մեղադրական եզրակացության մեջ, այլ ոչ թե ուղղված է նոր մեղադրանքի ձևավորմանը և առաջադրմանը: Հետևաբար մյուս բոլոր դեպքերում մեղադրյալի հանդեպ պետք է առանձին քրեական հետապնդում հարուցվի:

Հաջորդ քրեադատավարական կարգավորումը, որը պետք է տարբերակել մեղադրանքի փոփոխման ինստիտուտից, դատական քննության ընթացքում այլ անձի նկատմամբ մեղադրանք առաջադրելն է (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 309.2-րդ հոդված):

Դրա համաձայն եթե առաջին ատյանի դատարանում դատական քննության ընթացքում ի հայտ են գալիս այնպիսի հանգամանքներ, որոնք հիմք են տալիս նույն քրեական գործով մեղադրանք առաջադրել մեկ այլ անձի (անձանց), որին տվյալ գործով մեղադրանք առաջադրված չի եղել, ապա մեղադրողն իրավունք ունի հարուցելու նոր քրեական գործ:

Եթե նոր հարուցված քրեական գործի արդյունքները կարող են հանգեցնել ամբաստանյալին առաջադրված մեղադրանքի փոփոխման կամ լրացման, ապա մեղադրողի միջնորդության հիման վրա դատարանը հետաձգում է գործի դատական քննությունը: Հետաձգված քրեական գործի քննությունը կատարվում է սույն օրենսգրքի 309.1-րդ հոդվածով սահմանված կանոններով: Նոր հարուցված քրեական գործի վարույթն իրականացվում է ընդհանուր հիմունքներով:

Դատական պրակտիկայի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ անձանց, ում վերագրվող՝ ենթադրյալ հանցագործությունների կապակցությամբ կարող է հարուցվել քրեական գործ, կարելի է բաժանել հետևյալ խմբերի՝

1) անձինք, որոնց կողմից կատարված ենթադրյալ հանրորեն վտանգավոր արարքն ազդում է քրեական գործով ապացուցման պրոցեսի վրա, օրինակ՝ տվյալ քրեական գործով տուժողի կամ վկայի կողմից սուտ ցուցմունք տալը, փորձագետի կողմից ակնհայտ կեղծ

եզրակացություն տալը, թարգմանչի կողմից ակնհայտ սխալ թարգմանությունը,

2) անձինք, որոնց հակահիրավական արարքները հանգեցրել են հանցագործի կողմից հանցագործության կատարման,

3) անձինք, ովքեր մեղադրյալի հետ հանցակցությամբ հանցագործություն են կատարել, և հանցակցության փաստն ի հայտ է գալիս դատաքննության ընթացքում,

4) անձինք, ովքեր պարտակել են մեղադրյալին վերագրվող ծանր կամ առանձնապես ծանր հանցագործությունը (ՀՀ քրեական օրենսգրքի 334-րդ հոդված),

5) անձինք, ում նախապես հայտնի է եղել մեղադրյալին վերագրվող՝ նախապատրաստվող ծանր կամ առանձնապես ծանր հանցագործության կատարման փաստը, բայց ովքեր չեն հայտնել դրա մասին (ՀՀ քրեական օրենսգրքի 335-րդ հոդված):

Այսպիսով, եթե քրեական գործի քննության ընթացքում ի հայտ են գալիս այնպիսի հանգամանքներ, որոնք այդ քրեական գործով ուսումնասիրվող հանցավոր դեպքի առնչությամբ հաստատում են այլ անձի կողմից քրեական օրենսգրքով նախատեսված արարքի կատարումը, ապա դատախազն իրավունք ունի հարուցել քրեական գործ[38], որի վարույթն իրականացվելու է ընդհանուր հիմունքներով:

Նշված կարգավորումը մեղադրանքը փոփոխելու ինստիտուտից պետք է տարբերել նրանով, որ մեղադրանքի փոփոխումը կատարվում է գործով մեղադրյալի նկատմամբ, իսկ նոր քրեական գործը հարուցվում է մեկ այլ անձի կողմից կատարված ենթադրյալ հանցագործության փաստի առթիվ:

Մեղադրանքը փոփոխելու ինստիտուտը պետք է տարբերել նաև գործը մեղադրողին վերադարձնելու ինստիտուտից: Համաձայն քրեական դատավարության օրենսգրքի 296-րդ հոդվածի՝ գործը մեղադրողին վերադարձնելու մասին որոշում դատարանը կայացնում է այն դեպքում, երբ մեղադրական եզրակացությունը չի համապատասխանում օրենսգրքի պահանջներին: Գործը մեղադրողին վերադարձնելու մասին որոշման մեջ, բացի նման որոշում կայացնելու հիմքերից, նշվում է այն ժամկետը, որի ընթացքում դատախազը պետք է վե-

[38] Նշենք, որ օրենսգրքի 309.2-րդ հոդվածում սխալ է «դատախազն իրավունք ունի» ձևակերպումը: Այն պետք է փոխարինվի «դատախազը պարտավոր է» բառակապակցությամբ, քանի որ հանցագործության հատկանիշներ հայտնաբերելու դեպքում դատախազը պարտավոր է, այլ ոչ թե իրավունք ունի հարուցելու քրեական գործ:

բադարձնի մեղադրական եզրակացությունում առկա թերությունները:

Գործը մեղադրողին վերադարձնելու ինստիտուտը տարբերվում է դատարանում մեղադրանքը փոխելու ինստիտուտից հետևյալ հատկանիշներով՝

1) մեղադրանքի փոփոխումը կատարվում է դատական քննության ընթացքում, իսկ գործը մեղադրողին վերադարձնելը՝ դատական քննության նախապատրաստական փուլում,

2) գործը մեղադրողին վերադարձվում է այն դեպքում, երբ մեղադրական եզրակացությունը չի համապատասխանում օրենքի պահանջներին, իսկ մեղադրանքը փոփոխելը ոչ թե մեղադրանքի անհամապատասխանությունն է մեղադրանքին ներկայացվող պահանջներին, այլ ի հայտ եկած համապատասխան փաստական և իրավական հանգամանքները,

3) մեղադրանքը փոխելը կատարվում է դատախազի կամ դատարանի կողմից սեփական նախաձեռնությամբ, իսկ գործը մեղադրողին վերադարձնելը՝ դատարանի նախաձեռնությամբ դատախազի կողմից:

**Айк Саргсян**

***Аспирант кафедры уголовного процесса и криминалистики ЕГУ***

## ВИДЫ ИЗМЕНЕНИЯ ОБВИНЕНИЯ И РАЗГРАНИЧЕНИЯ ИЗМЕНЕНИЯ ОБВИНЕНИЯ ОТ СМЕЖНЫХ ИНСТИТУТОВ

В рамках этой работы автором рассмотрены две проблемы связанные с институтом изменения обвинения в процесе судебного разбирательства: виды изменения обвинения и разграничение изменения обвинения от межных институтов.

Виды изменения обвинения дифференциированны и проанализированы в соответствии с изменением объема обвинения, согласно ужесточающим и смягчающим свойствам обвинения, изменением состава субьектов, фактических и правовых обстоятельств, и необходимостью новых следственных и правохранительных действий.

Автором проанализирована разница вышеупомянутого института от ряда смежных институтов: выдвижение новых обвинений, отказа от обвинения, возбуждение уголовного дела в связи с совершением преступления третьим лицом.

**Hayk Sargsyan**
***PhD student of the YSU Chair of Criminal procedure and Criminalistics***

# THE TYPES OF CHANGING CRIMINAL INDICTMENT AND THE DIFFERENTIATION OF THIS INSTITUTE FROM SEVERAL RELATED INSTITITES

In the following article the author has discussed and explored two important issues concerning changing the criminal indictment during court hearings, the types of changing criminal indictment and the differentiation of this institute from several related regulations.

The author has differentiated and analyzed the following types of changing criminal indictment, according to the volume of the criminal indictment, according to the subjects who render this decision, according to the factual and legal circumstances, and according to the necessity of conducting new investigative and other judicial actions.

The author has also analyzed the difference of this institute from several related regulations, especially from the correction of criminal indictment, from starting new indictment against defendant, turning down criminal indictment by the prosecutor, starting criminal case concerning an act committed by another person.

**Բանալի բառեր՝** *մեղադրանքի փոփոխում, մեղադրանքի փոփոխման տեսակներ, մեղադրանքի սահմանազատում հարակից ինստիտուտներից, մեղադրանքի շտկում, փաստական և իրավական հանգամանքներով մեղադրանքի փոփոխում, նոր մեղադրանքի առաջադրում, մեղադրանքի ծավալի փոփոխություն:*

**Ключевые слова:** *институт изменения обвинения, виды изменения обвинения, разграничение изменения обвинения от смежных институтов, коррекция обвинения, выдвижение нового обвинения, отказа от обвинения, изменение фактических и правовых обстоятельств изменение объема обвинения.*

**Key words:** *changing the criminal indictment, the types of changing of the criminal indictment, the differentiation of the institute of criminal indictment from severwl related institutions, the correction of criminal indictment, the change of criminal indictment by changing its factual and legal circumstances, instigation of criminal indictment, changing the volume of criminal indictment.*